



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հետազոտություն

ՀՀ-ում արտակարգ դրության համատեքստում
անձնական ազատության իրավունքի
սահմանափակման իրավաչափությունը

Երևան, 2020թ.



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ամփոփ նկարագիր

ՀՀ-ի ողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ը արտակարգ դրություն հայտարարելու և այն մինչև մայիսի 14-ը¹ երկարացնելու արդյունքում տեղի են ունեցել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լուրջ սահմանափակումներ: ՀՀ իշխանությունները ստիպված էին լուրջ քայլեր ձեռնարկել նոր կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու և իրավիճակի նկատմամբ հսկողությունը չկորցնելու նպատակով: Քայլերից շատերը կարծես թե բազմաթիվ երկրներում էին ձեռնարկվել, սակայն սահմանափակումների ծավալը և դրանք կարգավորող օրենսդրական դաշտը երկրից երկիր տարբերվում են: Համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրությունը ի հայտ բերեց բազմաթիվ օրենսդրական բացեր: Որոշ բացերը լրացնելու նպատակով ՀՀ Ազգային Ժողովի (ԱԺ) կողմից ընդունվեցին օրենքներ, այդ թվում՝ նախատեսվեց քրեական և վարչական պատասխանատվություն արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում որպես սահմանափակում նախատեսված մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելու համար: Պարետը իր հերթին նույնպես արձակեց որոշումներ, որոնք կարգավորում էին արտակարգ դրության ընթացքում մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները:

Սակայն օրենսդրական դաշտը մնում է անկատար, մասնավորապես՝ վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով անձանց ազատությունը սահմանափակելու ոլորտում: Թեև նման հնարավորություն սահմանված է ՀՀ սահմանադրությամբ, սակայն ներպետական օրենսդրությունը չի ապահովում անհրաժեշտ երաշխիքները: Միևնույն ժամանակ, տասնյակ անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության ըստ էության ազատության սահմանափակում հանդիսացող ինքնամեկուսացման պայմանները խախտելու պատճառով:

¹ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին 16 մարտի 2020թ. N 298-Ն ՀՀ կառավարության որոշումը, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140392>, Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին 13 ապրիլի 2020 թվականի N 543-Ն ՀՀ կառավարության որոշումը, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141255>:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մինչ օրս Հայաստանի իշխանությունները նշված սահմանափակումները որակել են որպես ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակում², սակայն կիրառված միջոցների վերլուծությունը ցույց է տալիս, որ Պարետի որոշմամբ մեկուսացման կամ ինքնամեկուսացման ցուցում ստացած անձինք փաստացի ենթարկվում են ազատության իրավունքի սահմանափակման՝ հաշվի առնելով սահմանափակման ինտենսիվությունը:

Հայաստանն օգտվել է իր իրավունքից՝ շեղվելու միջազգային պայմանագրերից, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) որոշ իրավունքներից և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 9-րդ (ազատության իրավունք), 12-րդ (ազատ տեղաշարժի իրավունք) և 21-րդ (հավաքների ազատության իրավունք) հոդվածները:

ՀՀ օրենսդրությունը³ նախատեսում է հնարավորություն սահմանափակել որոշ մարդու իրավունքներ արտակարգ դրության ժամանակ, ներառյալ՝ ազատ տեղաշարժվելու, հավաքների ազատության, կարծիքի արտահայտման ազատության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի սահմանափակում: *Սակայն օրենքը չի նախատեսում ազատության իրավունքի սահմանափակում:* Այդ իրավունքի սահմանափակում նախատեսելու համար ՀՀ կառավարության կողմից մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որն ԱԺ է ներկայացվել հրատապության կարգով և ընգրկվել է 2020թվականի ապրիլի 28-ի նիստի օրակարգում⁴:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է փաստել, որ մինչ օրս Պարետի ցուցումով մեկուսացման/ինքնամեկուսացման ենթարկված անձանց ազատության սահմանափակումը, ինչպես նաև այդ ռեժիմը խախտելու համար վարչական պատասխանատվության ենթարկելը եղել է ոչ իրավաչափ:

² Տե՛ս, օրինակ, պարետի որոշումներ. Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց տեղաշարժի սահմանափակումների վերաբերյալ 24 մարտի 2020 թ. N 16 (չի գործում), հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140682>; Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ 31 մարտի, 2020 թ. N 27 որոշում, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141596>:

³ Հոդված 4, ՀՀ օրենքը Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին, ՀՕ-106-Ն, ուժի մեջ է 05.05.2012, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140775>:

⁴ Տե՛ս «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին; «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին», հասանելի է <http://www.parliament.am/agenda.php?lang=arm>:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

I. Միջազգային նորմեր

Դաշնագրի 9-րդ հոդվածով և ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածով երաշխավորվում է յուրաքանչյուր մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, և սահմանում, որ ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան այդ պայմանագրերով սահմանված հիմքերով և օրենքով սահմանված կարգով:

Դաշնագրի 12-րդ հոդվածով և Կոնվենցիայի թիվ 4 արձանագրությունը⁵ սահմանում են, որ որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք:

Ազատ տեղաշարժի և ազատության իրավունքները բացարձակ իրավունքներ չեն, այսինքն՝ ենթակա են սահմանափակման, եթե այդ սահմանափակումները համապատասխանում են մի շարք չափանիշների.

- նախատեսված են օրենքով,
- անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում,
- հետապնդում են սահմանված նպատակներից մեկը՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

Բացի այդ, պետության տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունքը կարող է որոշ ոլորտներում ենթարկվել սահմանափակումների, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և արդարացվում են ժողովրդավարական հասարակության հասարակական շահերով:

ՄԻԵԿ-ը, ի թիվս այլ հիմքերի, նախատեսում է անձանց օրինական ազատությունից զրկելը վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով: Կոնվենցիան նախատեսում է մի շարք երաշխիքներ, այդ թվում՝ ազատությունից զրկվելու պատճառների մասին իրեն

⁵Արձանագրություն թիվ 4, Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ որոշ այնպիսի իրավունքների եվ ազատությունների ապահովման մասին, որոնք այլ են, քան կոնվենցիայի եվ նրան կից թիվ առաջին արձանագրության մեջ արդեն ընդգրկվածները՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ, 16-ը սեպտեմբերի, 1963 թ., Ստրասբուրգ, հասանելի է <http://www.irtek.am/views/act.aspx?aid=47278>:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՅ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվելը, ինչպես նաև դատարանի կողմից ազատությունից զրկվելու իրավաչափությունը ստուգելը:

Բացի այդ, արտակարգ իրավիճակներում վերը նշված փաստաթղթերով երաշխավորված իրավունքների պահպանումից հնարավոր է կատարել շեղում: Այս իրավունքից ՀՀ-ն օգտվել է մարտի 19-ին՝ Եվրոպայի Խորհրդին ծանուցելով⁶ կոնվենցիայի որոշ իրավունքներից շեղում կատարելու վերաբերյալ, սակայն չի թվարկել կոնկրետ իրավունքներ՝ հղում անելով Արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշման բովանդակությանը: Այս առումով որոշակիության պակասն ինքնին պարունակում է կամայականության ռիսկ: Իսկ քանի որ այս պահի դրությամբ գործող ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում ազատության իրավունքի սահմանափակման հնարավորություն արտակարգ դրության ժամանակ, կարելի է եզրահանգել, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածից շեղում չի արվել:

Հատկանշական է, որ ՀՀ-ն ՄԱԿ-ին հստակորեն ծանուցել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի և՛ 9-րդ հոդվածով երաշխավորված ազատության իրավունքից, և՛ 12-րդ հոդվածով երաշխավորված ազատ տեղաշարժի իրավունքից շեղում անելու վերաբերյալ⁷:

Ինչպես տեսնում ենք, և՛ ազատության, և՛ ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման հիմք կարող է հանդիսանալ առողջության պաշտպանությունը: Արտակարգ դրություն հայտարարելով՝ ՀՀ իշխանությունները սահմանել են որոշ սահմանափակումներ հենց առողջության պաշտպանության հիմքով՝ համավարակի հետևանքները կանխելու նպատակով: Սակայն միայն առողջության պաշտպանության ապահովման նպատակը ինքնին բավարար հիմք չէ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների սահմանափակման համար:

Այն կարևոր չափորոշիչները, որոնց հիման վրա պետք է գնահատել այն անձի ազատությունից զրկվելու «իրավաչափությունը», որը կարող է «վարակիչ հիվանդության տարածման պատճառ» լինել, հետևյալն են՝

- Արդյո՞ք հիվանդության տարածումը վտանգավոր է հանրային առողջության և անվտանգության համար, և
- Արդյո՞ք վարակված անձի կալանքը հիվանդության տարածմանը խոչընդոտելու վերջին տարբերակն է, քանի որ այլ ավելի մեղմ միջոցառումներն արդեն նախատեսված են եղել և համարվել են ոչ բավարար հանրային շահի պաշտպանության տեսանկյունից⁸:

⁶ Ծանուցումը հասանելի է https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/005/declarations?p_auth=oC00wpDO:

⁷ Ծանուցումը հասանելի է <https://treaties.un.org/doc/Publication/CN/2020/CN.114.2020-Eng.pdf>: Շեղումը տարածվում է նաև հավաքների ազատության իրավունքի վրա:

⁸ Տե՛ս, Ուղեցույց 5-րդ հոդվածի վերաբերյալ ազատության եվ անձնական անձեռնմխելիության իրավունք, Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2014թ., էջ 26, հասանելի է https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_HYE.pdf; CASE OF ENHORN v. SWEDEN, 56529/00,



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար կարանտին հայտարարելը կամ մարդկանց մեկուսացնելը ընդունված համաշխարհային պրակտիկա է: Սակայն այդ միջոցառումների գործարկումը պետք է համապատասխանի մի շարք պահանջների, այդ թվում՝ հիմքերի և ընթացակարգերի օրենքով սահմանված լինելը: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) իր կողմից հրապարակած զեկույցում⁹ նշում է, որ ներպետական օրենսդրությունը պետք է թույլատրի հանրային առողջության ոլորտի պաշտոնյաներին ցուցում տալ վարակված անձանց մեկուսացման նպատակով, և կարանտինի ենթարկել այն անձանց, ովքեր կարող են վարակվել լուրջ վարակիչ հիվանդությամբ: Նման սահմանափակումները պետք է կիրառվեն որպես **բացառիկ միջոց** և լինեն **նվազագույնս սահմանափակող**: Այն անձինք, ովքեր կարիք չունեն բժշկական օգնության, կարող են ինքնամեկուսացվել իրենց բնակության վայրում, այլ ոչ թե տեղավորվել հիվանդանոցում կամ այլ վայրում, որտեղ այդ անձը գրկվում է ազատությունից: Հարկադիր հոսպիտալացում կամ մեկուսացում թույլատրող օրենքները պետք է ապահովեն, որ այդ անձանց **հիմնական կարիքները հոգվում** են, ներառյալ՝ կացարանով, սննդով, ջրով և սանիտարական պայմանների ապահովում¹⁰, ինչպես նաև ապահովեն պատշաճ բուժում և խնամք՝ հաշվի առնելով մեկուսացված անձանց կրոնական և մշակութային սովորույթները: Օրենքով նախատեսված հարկադիր բուժումը պետք է թույլատրելի լինի միայն այն դեպքում, երբ անձը ի վիճակի չէ կամ չի ցանկանում համաձայնել բուժմանը, և եթե նրա վարքագիծը զգալի ռիսկ է ներկայացնում լուրջ հիվանդության փոխանցման առումով: Բացի այդ, ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի համապատասխան ընթացակարգային երաշխիքներ՝ երաշխավորելու մեկուսացված և կարանտինում գտնվող անձանց **ազատության սահմանափակման՝ դատարանի կողմից առջամիտ ժամկետում իրավաչափությունը ստուգելու իրավունքը**¹¹:

Այսինքն՝ որպեսզի ազատությունից գրկելը լինի իրավաչափ, այն.

1. պետք է լինի օրենքով նախատեսված,
2. ազատությունից գրկման իրավաչափությունը ու հիմնավորվածությունը ենթարկվի դատական ստուգման,

Judgment, 25/01/2005, para. 44, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22respondent%22:%5B%22SWE%22%5D,%22article%22:%5B%225-1-e%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22%5D,%22itemid%22:%5B%22001-68077%22%5D%7D>:

⁹ St' u Advancing the right to health: the vital role of law, Գլուխ 10, հասանելի է <https://www.who.int/healthsystems/topics/health-law/health-law-report/en/>:

¹⁰ Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրած տեղեկությունների՝ մեկուսացված անձանց կացարանի և սննդի ծախսերը հոգվում են պետության հաշվին, իսկ ինքնամեկուսացման մեջ գտնվողներին՝ անձանց հաշվին, թեև որոշներին տրամադրվում է սոցիալական աջակցություն: ՀՀ ԱՆ գրություն առ 21.04.2020 ԱԹ/04/7534-20:

¹¹Advancing the right to health: the vital role of law, op.cit., էջ 160:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

3. անհրաժեշտ լինի տվյալ իրավիճակում¹² և համաչափ՝ հանրային առողջությանը սպառնացող վտանգին¹³:

Արտակարգ դրության համատեքստում ՀՀ-ում սահմանված ազատ տեղաշարժի և ազատության իրավունքի կարգավորումը

ՀՀ սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում¹⁴:

Այս պահին գործող Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին ՀՀ օրենքը¹⁵ սահմանում է ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակում, սակայն չի նախատեսում ազատության իրավունքի սահմանափակման հնարավորություն: Հատկանշական է, որ 16 մարտի 2020 թ. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին N 298-Ն ՀՀ կառավարության որոշման¹⁶ մեջ արդեն իսկ մատնանշվում է, որ վարակի տարածման սահմանների և դրանով վարակված անձանց թվի ավելացման պայմաններում համապատասխան կանխարգելիչ աշխատանքների և միջոցառումների իրականացումը և դրանց արդյունքում անձանց կյանքի և առողջության պաշտպանությունը հնարավոր չի լինի ապահովել առանց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման, այդ թվում՝ անձնական ազատության իրավունքը՝ իրավիճակի պահանջով և օրենքով սահմանված կարգով

¹² CASE OF WITOLD LITWA v. POLAND, 26629/95, Judgment, 04/04/2000, § 78, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-58537%22%7D>:

¹³ CASE OF VASILEVA v. DENMARK, 52792/99, Judgment, 25/09/2003, § 41, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22itemid%22:%5B%22001-61309%22%7D>:

¹⁴ ՀՀ սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>:

¹⁵ Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին ՀՀ օրենքը:

¹⁶ 16 մարտի 2020 թ. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին N 298-Ն ՀՀ կառավարության որոշում, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140212>:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ժամանակավորապես կասեցնելու կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկելու: ՀՀ անցակետերում «համապատասխան զննությունն անցնելուց հետո բոլոր անձինք ենթակա են ինքնամեկուսացման, եթե ախտանիշների առկայությամբ պայմանավորված վերջիններիս նկատմամբ չի կիրառվում հոսպիտալացում և (կամ) այլ սահմանափակող միջոցառումներ: Անցակետով անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուց հետո բժշկական զննությունն անցնելուց, հոսպիտալացումից, ինքնամեկուսացումից և (կամ) այլ սահմանափակող միջոցառումներից հրաժարվելու դեպքում կարող է սահմանափակվել այդ անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը որոշակի տարածքի (վայրի) սահմաններում՝ հետազոտման, բուժման և վարակի տարածումը կանխելու նպատակով: Սույն կետից բացառությունները կարող են սահմանվել պարետի որոշմամբ»: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրահանգով սահմանված՝ համաճարակաբանական լարված իրավիճակ ունեցող երկրների ցանկից ժամանած անձինք պետք է տեղափոխվեն հատուկ նախատեսված կարանտինային վայրեր կամ նրանց կարող է հրահանգվել անցնել ինքնամեկուսացման: Կառավարության որոշման համաձայն՝ ինքնամեկուսացում է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով¹⁷: Կառավարության որոշումը չի պարունակում «մեկուսացում» եզրույթը և, հետևաբար, դրա սահմանումը: Որոշմամբ ստեղծվում է պարետատուն և նշանակվում պարետ՝ ՀՀ փոխվարչապետը:

Մարտի 24-ին Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց տեղաշարժի սահմանափակումների վերաբերյալ N 16 պարետի որոշմամբ¹⁸ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանափակվել էր մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքը և սահմանվել անձանց պարտադիր ինքնամեկուսացում իրենց մշտական բնակության կամ իրենց նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի հնարավոր տարածումը կանխելու նպատակով: Նույն սահմանափակումը սահմանվեց նաև մարտի 31-ի Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ Պարետի N 27

¹⁷ Ibid., Հավելված 1:

¹⁸ Մարտի 24-ին Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց տեղաշարժի սահմանափակումների վերաբերյալ N 16 պարետի որոշում, ուժը կորցրել է 01.04.2020թ. , հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140553>:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որոշմամբ¹⁹: Սահմանված սահմանափակումների կատարման նկատմամբ վերահսկողությունը դրված է ՀՀ ոստիկանության վրա:

Բացի այդ, համաձայն մարտի 18-ի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս եվ Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ Պարետի N 5 որոշման²⁰՝ ՀՀ տարածք մուտք գործելուց հետո, ախտանշաններ չհայտնաբերելու դեպքում, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կամ մարզպետարանի կողմից տրամադրված տրանսպորտային միջոցով տվյալ անձինք, ՀՀ առողջապահության նախարարության ցուցմանը համապատասխան, տեղափոխվում են ՀՀ առողջապահության նախարարության կամ մարզպետարանի կողմից սահմանված կարանտինային վայր և ենթակա են 14-օրյա մեկուսացման: Նույն սահմանափակումների են ենթարկվում կոնտակտավոր անձինք: Մեկուսացման վայրերում ՀՀ ոստիկանության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից կիրառվում են անհրաժեշտ միջոցառումներ: Սակայն վերը նշված որոշումները չեն պարզաբանում մեկուսացման ռեժիմի սահմանափակումները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ըստ ՀՀ օրենսդրության, արտակարգ դրության համատեքստում ազատ տեղաշարժի և ազատության իրավունքի սահմանափակման հիմքերը և իրավաչափության գնահատումը տարբերվում են, իսկ կիրառվող սահմանափակումները բավականին խիստ են, կարևոր է դառնում հասկանալ դրանց էությունը և իրավաչափությունը:

Ազատության թե՞ ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակում

Որոշ հանգամանքներում ազատության և ազատ տեղաշարժի իրավունքները և դրանց տարբերությունը կարող են թյուրընկալվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) դիրքորոշման համաձայն՝ «5-րդ հոդվածի 1-ին կետի տեսանկյունից ազատությունից զրկել համարվող ազատ տեղաշարժի իրավունքի **բավականին խիստ սահմանափակումների** և միայն ըստ թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածի ազատ տեղաշարժի իրավունքի հասարակ սահմանափակումների միջև առկա

¹⁹ Մարտի 31-ի Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ Պարետի N 27 որոշում, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141596>:

²⁰ Մարտի 18-ի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս եվ Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ Պարետի N 5 որոշում, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141592>:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

տարբերությունը կայանում է սահմանափակումների աստիճանի կամ ինտենսիվության, և ոչ թե բնույթի կամ էության մեջ»²¹:

Ազատության իրավունքի սահմանափակումը գնահատելիս ՄԻԵԴ-ը հաշվի է առել հետևյալ գործոնները.

- ազատության զրկելու վայրից հեռանալու հնարավորությունը²²,
- ազատությունից զրկված անձի տեղաշարժման ստուգման և վերահսկողության ինտենսիվությունը,
- մեկուսացման աստիճանը,
- ընձեռնված սոցիալական շփումների հնարավորությունը²³:

II. ՀՀ-ում գործող սահմանափակումների իրավաչափությունը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ իրավիճակում սահմանափակումների անհրաժեշտությունը և հանրային առողջությանը սպառնացող վտանգի համաչափությունը մասնագիտական գնահատման հարցեր են, ստորև կներկայացնենք իրավական պահանջների համապատասխանելիության խնդիրները:

2.1 Արդյո՞ք անձը զրկված է ազատությունից

ՀՀ կառավարության որոշման²⁴, պարետի որոշման²⁵, ինչպես նաև ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրած տեղեկությունների²⁶

²¹CASE OF GUZZARDI v. ITALY, 7367/76, Judgment, 06/11/1980, § 93, CASE OF RANTSEV v. CYPRUS AND RUSSIA, 25965/04, Judgment, 07/01/2010, § 314, CASE OF STANEV v. BULGARIA, 36760/06, Judgment, 17/01/2012, § 115, հասանելի են <https://hudoc.echr.coe.int>:

²² CASE OF H.L. v. THE UNITED KINGDOM, 45508/99, Judgment, 05/10/2004, § 91, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2245508/99%22%5D,%22itemid%22:%5B%22001-66757%22%5D%7D>:

²³Տե՛ս՝ GUZZARDI v. ITALY, § 95, CASE OF H.M. v. SWITZERLAND, 39187/98, Judgment, 26/02/2002, § 45, H.L. v. THE UNITED KINGDOM, § 91, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22appno%22:%5B%2239187/98%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22CHAMBER%22%5D,%22itemid%22:%5B%22001-60169%22%5D%7D>, CASE OF STORCK v. GERMANY, 61603/00, Judgment, 16/06/2005, § 73, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22appno%22:%5B%2261603/00%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22CHAMBER%22%5D,%22itemid%22:%5B%22001-69374%22%5D%7D>:

²⁴ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-ն որոշում, ինքնամեկուսացման հրահանգավորում ստանալու ընտացակարգի մասին: Անցակետով անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուց հետո անհապաղ կատարվում է հատուկ զննություն վարակի առկայության կամ վարակի ախտանիշների բացահայտման նպատակով: Համապատասխան զննություն անցնելուց հետո բոլոր անձինք ենթակա են ինքնամեկուսացման, եթե ախտանիշների առկայությամբ պայմանավորված վերջիններիս նկատմամբ չի կիրառվում հոսպիտալացում և (կամ) այլ սահմանափակող միջոցառումներ: Անցակետով անձանց՝ Հայաստանի Հանրապետության տարածք



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

մեկուսացումը/ինքնամեկուսացումը ենթադրում է, որ նշված անձը պարտավոր է բավականին տևական ժամանակ (14 օր) գտնվել նախապես որոշված վայրում, որը չի կարող փոփոխել այդ ընթացքում (բացառությամբ Պարետի կողմից թույլատրությամբ), պարտավոր է բացառել անմիջական սոցիալական շփումները այլ անձանց հետ, չի կարող դուրս գալ զբոսանքի, կանոնավոր ենթարկվում է վերահսկողության, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով և/կամ ոստիկանի ու բժշկի տնայցերի կամ զանգերի միջոցով, իսկ պայմանները խախտելու դեպքում՝ ենթակա է պատասխանատվության²⁷: Ընդ որում, սահմանափակումները փաստացի սկսել են կիրառվել անգամ մինչև արտակարգ դրության մասին հայտարարելը: ՀՀ առողջապահության նախարարության գրության²⁸ համաձայն՝ մարտի 1-ից մինչև ապրիլի 7-ը մեկուսացվել է 2710 անձ, իսկ ինքնամեկուսացվել՝ 9735 անձ: Մինչև ապրիլի 10-ը ինքնամեկուսացման պայմանները խախտելու համար վարչական պատասխանատվություն է ենթարկվել 12 անձ, իսկ մեկուսացման կանոնների խախտում չի արձանագրվել:

Վերը նշված ՄԻԵԴ-ի կողմից սահմանված չափանիշների ներքո վերլուծությունը ցույց է տալիս, որ *մեկուսացված անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումները հանդիսանում են ազատության իրավունքի սահմանափակում*:

- անձը իրավունք չունի մեկուսացման վայրից հեռանալ 14 օրվա ընթացքում,
- մեկուսացված անձի տեղաշարժը կանոնավոր կերպով ստուգվում է և խստորեն վերահսկվում է,
- մեկուսացման աստիճանը բավականին բարձր է,
- անմիջական սոցիալական շփումները բացառված են:

Այսինքն, անձը փաստացի զրկված է ազատությունից ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի իմաստով, այլ ոչ թե սահմանափակված է նրա ազատ տեղաշարժի իրավունքը:

մուտք գործելուց հետո բժշկական զննություն անցնելուց, հոսպիտալացումից, ինքնամեկուսացումից և (կամ) այլ սահմանափակող միջոցառումներից հրաժարվելու դեպքում կարող է սահմանափակվել այդ անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը որոշակի տարածքի (վայրի) սահմաններում՝ հետազոտման, բուժման և վարակի տարածումը կանխելու նպատակով: Սույն կետից բացառությունները կարող են սահմանվել պարետի որոշմամբ:

²⁵ Տե՛ս, օրինակ, Պարետի N27 որոշումը, Հավելված 1:

²⁶ ՀՀ Առողջապահության գրություն առ 21.04.2020 ԱԹ/04/7534-20:

²⁷ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, հոդված 182.3, *հասանելի է* <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150017>; Քրեական օրենսգիրք, հոդված 277.1, *հասանելի է* <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150015>:

²⁸ ՀՀ Առողջապահության գրություն առ 21.04.2020 ԱԹ/04/7534-20:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մարտի 23-ի փոփոխությունների արդյունքում ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 182.3 հոդվածի 10-րդ մասով²⁹ նախատեսված է վարչական պատասխանատվություն «արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում որպես սահմանափակում նախատեսված մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելը», որն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհինսպատիկի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 277.1. հոդվածով³⁰ նախատեսված է քրեական պատասխանատվություն «Արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում մեկուսացման կամ ինքնամեկուսացման կանոնները կամ ազատ տեղաշարժվելու իրավունքի այլ սահմանափակումները խախտելը», որն անզգուշությամբ առաջացրել է անձի վարակում (մաս 1) կամ երկու կամ ավելի անձանց վարակում (մաս 2) կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ (մաս 3): Սա նշանակում է, որ այն անձը, ում վերաբերյալ առկա է մեկուսացման/ինքնամեկուսացման ցուցում, լքել է մեկուսացման վայրը, ոչ միայն ոստիկանության կողմից որոնվելու է, վերադարձվելու է մեկուսացման վայր, այլ նաև ենթարկվելու պատասխանատվության: Այս դրույթները վկայում են, որ անձը ազատ չէ լքել մեկուսացման/ինքնամեկուսացման վայրը:

Վերը նշված օրենսգրքերում սահմանված է, որ մեկուսացում³¹ է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումը դրա համար նախատեսված որոշակի տարածքում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը բացառելու և վարակի տարածումը կանխելու նպատակով: Ինքնամեկուսացում³² է համարվում անձանց, այդ թվում՝ հիվանդի կամ վարակվածի կամ նրանց հետ շփված անձանց (կոնտակտավորների) առանձնացումն իրենց մշտական բնակության կամ իր նախընտրությամբ մեկ այլ վայրում՝ այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և վարակի տարածումը կանխելու նպատակով:

2.2 Արդյո՞ք ազատությունից զրկելն իրավաչափ է

²⁹ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, *խմբ., լրաց. 23.03.20 ՀՕ-144-Ն*:

³⁰ Քրեական օրենսգիրք, 277.1-ին հոդված:

³¹ Տե՛ս, Քրեական օրենսգրքի հոդված 277.1-ի մաս 4; Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 182.3-ի մաս 11:

³² Ibid, Քրեական օրենսգրքի հոդված 277.1-ի մաս 5; Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 182.3-ի մաս 11:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածը սահմանում է, որ

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը [...] կանխելու նպատակով.

5. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է»:

Ազատությունից զրկելու իրավաչափությունը գնահատելիս ՄԻԵԴ-ը հաշվի է առել, թե որքանով է համապատասխանում ներպետական իրավունքը իրավունքի գերակայության սկզբունքին, և վերջինի հետ կապված իրավական երաշխիքների սկզբունքին, համաչափության և կամայականություններից պաշտպանության սկզբունքին³³:

2.2.1 Օրենքով նախատեսված հիմքով և կարգով

Ազատության իրավունքի սահմանափակման առաջին նախապայմաններից է, որ դա պետք է լինի նախատեսված օրենքով: Բացի ՀՀ սահմանադրությունից, որևէ օրենք չի նախատեսում վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով ազատությունից զրկելու հնարավորություն, մեխանիզմ և երաշխիքներ: Վարակիչ հիվանդությունների դեպքում պարտադիր հոսպիտալացման և մեկուսացման հնարավորություն նախատեսված է միայն Առողջապահության նախարարի որոշ հրամաններով, իսկ պարտադիր ինքնամեկուսացման կամ հատուկ վայրեր տեղավորելու հնարավորություն սահմանված է վերը նշված Արտակարգ դրություն հայտարարելու Կառավարության որոշմամբ և պարետի մի շարք որոշումներում:

Կարևոր է պարզել, թե արդյո՞ք վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով ազատությունից զրկելը իրականացվում է ընդնահուր օրենսդրության համատեքստում թե արտակարգ դրության ժամանակահատվածում ընդունված որոշումների հիման վրա: «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում ազատության իրավունքի սահմանափակման որևէ հնարավորություն և չի օժտում Պարետին կամ որևէ այլ պետական մարմնին վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով անձանց ազատությունը սահմանափակելու իրավունքով: «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը³⁴ նույնպես չի

³³SIMONS c. BELGIQUE, 71407/10, Decision, 28/08/2012, § 32, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-113093%22%5D%7D>:

³⁴ ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենք, ՀՕ-43, ուժի մեջ է 18.12.1992, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=29774>:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

սահմանում որևէ մարմնի իրավասություն վարակիչ հիվանդությունների կանխարգելման հիմքով անձանց ազատությունից զրկելու առումով, այդ թվում նաև մեկուսացնելու/ինքնամեկուսացնելու միջոցով: Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր իրավասության շրջանակներում սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների տարածումը կանխելու և վերացնելու հատուկ պայմանները և ռեժիմը: Իսկ օրենքի 8-րդ հոդվածը լիազորում է Պատգամավորների շրջանային և հանրապետական ենթակայության քաղաքների քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեներն իրենց իրավասության շրջանակներում՝ ընդունել որոշումներ զանգվածային հիվանդությունների և թունավորումների, վարակիչ հիվանդությունների համաճարակների առաջացման դեպքում իրենց տարածքում կարանտին կամ սահմանափակիչ միջոցառումներ մտցնելու և դրանք չեղյալ հայտարարելու մասին:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի՝ «Մարդու, մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդության կասկած ներկայացնող անսովոր և անսպասելի դեպքերի համաճարակաբանական հսկողության կազմակերպում» սկ 3.1.1-0-29-13 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը հաստատելու մասին հրամանի³⁵ մարդու, մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդության կասկած ներկայացնող անսովոր և անսպասելի յուրաքանչյուր դեպքի բուժումը, կարանտինի սահմանումը, առաջնային միջոցառումների կազմակերպումը և մեկուսացումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2011 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում ատիպիկ թոքաբորբի համաճարակաբանական հսկողություն» ՄԿ 3.1.1-0-22-11 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 08-Ն հրամանի³⁶, անսպասելի դեպքերի ժամանակ նաև՝ ՀՀ առողջապահության նախարարի 2010

³⁵ ՀՀ առողջապահության նախարարի՝ «Մարդու, մարդու և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդության կասկած ներկայացնող անսովոր և անսպասելի դեպքերի համաճարակաբանական հսկողության կազմակերպում» սկ 3.1.1-0-29-13 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը հաստատելու մասին 28 սեպտեմբերի 2013 թ. հրաման N 58-Ն, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87266>:

³⁶ «Հայաստանի Հանրապետությունում ատիպիկ թոքաբորբի համաճարակաբանական հսկողություն» ՄԿ 3.1.1-0-22-11 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը հաստատելու մասին 9 օգոստոսի 2011 թ. թիվ 08-Ն հրաման: Հրամանով նախատեսվում է, որ ատիպիկ թոքաբորբի կասկածի կամ հիվանդի հայտնաբերման դեպքում յուրաքանչյուր բուժկանխարգելիչ կազմակերպությունում իրականացվում են հակահամաճարակային միջոցառումներ. ձեռնարկվում են միջոցներ հայտնաբերման վայրում հիվանդի մեկուսացման համար՝ մինչև հոսպիտալացումը, հիվանդին ցուցաբերվում է անհրաժեշտ բժշկական օգնություն, հիվանդները սանիտարական փոխադրամիջոցով տեղափոխվում են ինֆեկցիոն հիվանդանոցներ, հիվանդներին, որոնք ենթակա չեն տեղափոխման, օգնություն ցուցաբերվում է տեղում: Նույն հրամանով սահմանվում է, որ հյուրանոցում հիվանդ հայտնաբերելու դեպքում



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2115-Ա հրամանով հաստատված «Համաճարակների վարման ուղեցույցի» համաձայն: Հրամանի համաձայն՝ վարակի հսկողության միջոցառումներն իրականացվում են օդակաթիլային, օդային, օդափոշային, կոնտակտ-կենցաղային, արյունային տարածման կանխարգելման համար և ներառում են մեկուսացման, անհատական պաշտպանության միջոցառումներ: Մեկուսացում եզրույթն օգրագործվում է հիվանդին առանձնացնելու համատեքստում՝ մինչև հոսպիտալացում, իսկ հիվանդի հետ շփված անձանց նկատմամբ, այդ թվում՝ բուժանձնակազմի, սահմանվում է բժշկական հսկողություն:

ՀՀ առողջապահության նախարարի՝ բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում վարակիչ հիվանդություններով և սննդային թունավորումներով տառապող հիվանդների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին հրամանում խոսվում է բուժման կազմակերպման, ուղեգրման կամ հսկողության մասին, բայց չի կարգավորվում մեկուսացման հարցը³⁷: Հրամանը պարունակում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ինֆեկցիոն բժշկական կազմակերպություններում և բժշկական կազմակերպությունների ինֆեկցիոն բաժանմունքներում հոսպիտալացման ցուցումները, այդ թվում՝ պարտադիր հոսպիտալացում և կարանտինի կիրառման հնարավորություն: Մեկուսացում նախատեսված է միայն խոլերայի, ժանտախտի և որովայնային տիֆի դեպքում, և տեղափոխում միայն ինֆեկցիոն բժշկական կազմակերպություն, բժշկական կազմակերպության ինֆեկցիոն բաժանմունք և պրովիզոր հիվանդանոց:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացում տարբեր մակարդակների առողջապահական կազմակերպությունների և շահագրգիռ մարմինների դերերը հաստատելու մասին ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի և ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. համատեղ հրամանը նույնպես չի պարունակում մեկուսացման ցուցում տալու և այդ ռեժիմի պահպանելը վերահսկելու լիազորություններ³⁸:

հյուրանոցի տնօրինության առաջարկվում է անմիջապես հիվանդի հետ շփված անձանց մեկուսացնել իրենց իսկ համարներում: Հիվանդի հետ շփված անձանց նկատմամբ սահմանվում է բժշկական հսկողություն: հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=70551>:

³⁷ՀՀ առողջապահության նախարարի՝ բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում վարակիչ հիվանդություններով և սննդային թունավորումներով տառապող հիվանդների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին 17 դեկտեմբերի 2013 թ. N 81-Ն հրաման, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=89416>:

³⁸Վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացում տարբեր մակարդակների առողջապահական կազմակերպությունների և շահագրգիռ մարմինների դերերը



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազատությունից զրկել կարելի է միայն օրենքով նախատեսված դեպքում և կարգով, Պարետը, որը հանդիսանում է Արտակարգ դրության ժամանակ գործող մեխանիզմ, կամ որևէ պաշտոնատար անձ իրավաություն չունի արտակարգ դրության պայմաններում ցուցում տալ անձանց ազատության իրավունքը սահմանափակելու վերաբերյալ մեկուսացման կամ ինքնամեկուսացման միջոցով:

Վերոգրյալից հետևում է, որ ազատության իրավունքի սահմանափակում հանդիսացող միջոցները, այդ թվում՝ խիստ մեկուսացումը և վերահսկողությունը, հատկապես ոչ հիվանդ անձանց նկատմամբ, կիրառվել է արտակարգ դրության համատեքստում ընդունված Կառավարության և պարետի որոշումների հիման վրա: Այս առումով, կրկին հարց է ծագում այդ որոշումների՝ օրենքի հիման վրա և սահմանված կարգով ընդունված լինելու առումով: Ինչպես նշվեց, Կառավարությունը կամ որևէ պաշտոնար անձ նույնպես լիազորված չեն արտակարգ իրավիճակի պայմաններում սահմանել անձնական ազատության իրավունքի սահմանափակումներ: Այդ բացը լրացնելուն է միտված ՀՀ կառավարության կողմից մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որն ընգրկված է ապրիլի 28-ի ԱԺ-ի նիստի օրակարգում:

2.3 Ենթակա է դատական ստուգման

Հաշվի առնելով մեկուսացման/ինքնամեկուսացման տևական ժամանակը՝ 14 օր, ինչպես նաև ազատության սահմանափակման և վերահսկողության ինտենսիվությունը և պայմանները խախտելու դեպքում հնարավոր սանկցիան՝ դատարանի կողմից ազատության սահմանափակման իրավաչափության ստուգման երաշխիքը շատ կարևոր է: ՄԻԵԴ-ի պրակտիկայում, առանց դատարանի կողմից իրավաչափության ստուգման հնարավորության երեք ու կես օրով անձի ազատության սահմանափակումը համարվել է ազատության իրավունքի խախտում³⁹:

Վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործընթացում պետք է տարբերել հարկադիր հոսպիտալացման և մեկուսացման եզրույթները, թեև դատական ստուգման առումով երաշխիքները նույնաբովանդակ են: ԱՀԿ-ի ուղեցույցի համաձայն՝ բուժման ցուցման մեջ պետք է հստակ նշվեն ցուցման հիմքը, կիրառվող սահմանափակումները, և պետք է հաշվի առնվի այն սկզբունքը, որ անձի ազատությունը պետք է սահմանափակվի միայն այն չափ, որը անհրաժեշտ է հանրային առողջության համար ռիսկերն արդյունավետ նվազեցնելու համար: Ավելին, ԱՀԿ-ն

հաստատելու մասին ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի և ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. համատեղ հրաման, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81934>:

³⁹ CASE OF A.M. v. FRANCE, 56324/13, 12 July 2016, § 36, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/fre#%22tabview%22:%22document%22,%22itemid%22:%22001-165268%22>:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ընդգծում է, որ օրենսդրությամբ պետք է սահմանվեն դատավարական իրավունքներ՝ ի ապահովում այն անձի իրավունքների, ում վերաբերյալ կիրառվել է հարկադիր բուժման ցուցում: Մա կարող է ներառել նաև դատարանի կողմից բոլոր հարկադիր բուժման ցուցումների ստուգումը սահմանված ժամանակահատվածում⁴⁰:

Մեկուսացման ցուցում հիմնականում տրվում է այն անձանց, ովքեր ժամանել են արտերկրից կամ հանդիսանում են կոնտակտավոր անձ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեկուսացումը/ինքնամեկուսացումը, ըստ էության, հանդիսանում են ազատության սահմանափակում, ապա այդ անձինք օգտվում են բոլոր այն երաշխիքներից, որոնք սահմանված են ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածով և ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածով, այդ թվում՝ դատարանի կողմից ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափությունը ստուգելու իրավունքից:

ՀՀ ԱՆ կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն⁴¹, մեկուսացման/ինքնամեկուսացման ցուցում ստացած որևէ անձ չի բողոքարկել նշված ցուցումները: ՀՀ արդարադատության նախարարն ԱԺ-ում իր ելույթում նշեց, որ նման ցուցումը կարող է բողոքարկվի Վարչական դատարանում՝ ընդհանուր ընթացակարգով որպես ցանկացած այլ պետական մարմնի վարչական ակտ: Սակայն հաշվի առնելով իրավունքի տեսակը՝ ազատությունը, և միջամտության լրջությունը, ինչպես և այլ դեպքերում, երբ սահմանափակվում է անձի ազատությունը, գործընթացը պետք է լիներ այլ՝ դատարանը սահմանված ժամանակահատվածում, պահպանելով ընթացակարգային երաշխիքները, պետք է ստուգի ազատության սահմանափակման իրավաչափությունը՝ չսպասելով անձի կողմից բողոքի/հայցի: Բացի այդ, հատուկ ընթացակարգի բացակայության պայմաններում, նման հայցը կքննվի բավականին ուշ՝ հաշվի առնելով դատարանի ծանրաբեռնվածությունը: Պարզ չէ, թե արդյո՞ք այդ անձինք տեղեկացվում են իրենց իրավունքի մասին՝ իրենց համար հասկանալի լեզվով⁴²: Այսինքն՝ այն անձը, ով թեկուզ չի առարկում մեկուսացվելու/ինքնամեկուսացվելու ցուցումը կատարել, պետք է տեղյակ լինի իր իրավունքների մասին: Իսկ եթե հրաժարվում է կատարել ցուցումը, հատկապես ազատության սահմանափակման տևական լինելը և հնարավոր պատասխանատվության համատեքստում, անձը պետք է հնարավորություն ունենա, որպեսզի դատարանը ստուգի ազատության սահմանափակման իրավաչափությունը, ինչպես նաև առանց դատարանի որոշման ազատությունից զրկելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետից

⁴⁰ Sté u Advancing the right to health: the vital role of law, էջ 161:

⁴¹ ՀՀ ԱՆ գրություն առ 21.04.2020 ԱԹ/04/7534-20:

⁴² ՀՀ ԱՆ գրության համաձայն՝ մեկուսացման/ինքնամեկուսացման ցուցում ստացած անձանց թվում եղել են օտարերկրացիներ:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

երկար անազատության մեջ պահելու դեպքում որոշում կայացնի անձի ազատության սահմանափակման վերաբերյալ:

ՀՀ-ում հարկադիր բուժման իրավաչափության դատական ստուգման ընթացակարգ նախատեսված է միայն քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու դեպքում: «Հոգեբուժական օգնության մասին» օրենքով սահմանված է, որ անձի կողմից բուժումից հրաժարվելու կամ բուժումը դադարեցնելու պահանջ ներկայացնելուց հետո՝ 72 ժամվա ընթացքում, հաստատության տնօրենը դիմում է դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու համար⁴³:

ՄԻԵԴ-ի դիրքորոշումների համաձայն՝ «Դատարան» եզրույթը վերաբերում է այն մարմիններին, որոնք ունեն ոչ միայն համընդհանուր հիմնարար հատկանիշներ, որոնց առաջին շարքում գործադիր մարմիններից և կողմերից անկախ լինելն է, այլ նաև ապահովում են դատական վարույթի երաշխիքներ, պետք է անկախ լինի ոչ միայն գործադիր մարմնից, այլ նաև վեճի մասնակից կողմերից⁴⁴:

Սակայն պարտադիր չէ, որ ընթացակարգային պայմանները նույնը լինեն յուրաքանչյուր դեպքի համար, որի համար պահանջվել է դատարանի միջամտությունը: Որոշելու համար, թե արդյոք տվյալ վարույթն ապահովում է բավարար երաշխիքներ, պետք է հաշվի առնել առկա հանգամանքների որոշակի բնույթը⁴⁵: Եթե 5-րդ հոդվածի 4-րդ կետով կարգավորվող ընթացակարգը չի կարող մշտապես ուղեկցվել այն նույն երաշխիքներով, որոնք 6-րդ հոդվածը նախատեսում է քաղաքացիական կամ քրեական վեճերի համար, այն պետք է կրի դատական բնույթ և տվյալ անձին հնարավորություն տա օգտվել այն երաշխիքներից, որոնք համապատասխանում են բողոքարկման առարկա ազատությունից զրկելու բնույթին⁴⁶:

⁴³ Հոգեբուժական օգնության մասին ՀՕ-80-Ն օրենք, ուժի մեջ է 30.08.2004, հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docid=69113>

⁴⁴ CASE OF WEEKS v. THE UNITED KINGDOM, 9787/82, Judgment, 02/03/1987, § 61, CASE OF DE WILDE, OOMS AND VERSYP v. BELGIUM, 2832/66 2835/66 2899/66, Judgment, 18/06/1971, § 78; CASE OF ALI OSMAN ÖZMEN v. TURKEY, 42969/04, Judgment, 05/07/2016, § 87, հասանելի են <https://hudoc.echr.coe.int/>:

⁴⁵ CASE OF KHLAIFIA AND OTHERS v. ITALY, 16483/12, Judgment, 15/12/2016 § 129, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22fulltext%22:%5B%22Khlafia%20and%20Others%20v.%20Italy%22%2D%22documentcollectionid%22:%5B%22GRANDCHAMBER%22%2D%22CHAMBER%22%2D%22itemid%22:%5B%222001-170054%22%2D%22%7D>:

⁴⁶ CASE OF A. AND OTHERS v. THE UNITED KINGDOM, 3455/05, Judgment, 19/02/2009, § 203, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%2D%22appno%22:%5B%223455/05%22%2D%22documentcollectionid%22:%5B%22GRANDCHAMBER%22%2D%22itemid%22:%5B%222001-91403%22%2D%22%7D>, CASE OF IDALOV v. RUSSIA, 5826/03, Judgment, 22/05/2012, § 161, հասանելի է



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Դատարանը» պետք է իրավասու լինի կարգադրել տվյալ անձի ազատ արձակումը, եթե նա համարում է, որ կալանքն անօրինական է սովորական երաշխավորման լիազորությունն բավարար չէ⁴⁷: Դատական վերանայման հնարավորությունը պետք է տրվի ազատությունից զրկելուց հետո հնարավորինս շուտ⁴⁸, իսկ ոչ իրավաչափ լինելու դեպքում՝ անհապաղ ազատ արձակվի/վերացվի մեկուսացման/ինքնամեկուսացման ցուցումը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, եզրահանգում ենք, որ.

- Հայաստանի Հանրապետությունում 2020թ. մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության համատեքստում կիրառվող մեկուսացման/ինքնամեկուսացման ցուցումները, ըստ էության, համարվում են անձնական ազատության իրավունքի սահմանափակում,
- ՀՀ գործող օրենսդրությունը պատշաճ կերպով չի կարգավորում վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով անձի ազատության սահմանափակման հիմքերը, երաշխիքները և ընթացակարգը, թեև նման հնարավորություն սահմանված է ՀՀ սահմանադրությամբ,
- ՀՀ գործող օրենսդրությունը չի նախատեսում արտակարգ դրության ժամանակ ազատության իրավունքի սահմանափակման հնարավորություն,
- պարետի ցուցումով կիրառվող մեկուսացումը/ինքնամեկուսացումը ոչ իրավաչափ են, քանի որ պարետը օժտված չէ ազատության իրավունքի սահմանափակելու իրավունքով,
- պարետի ցուցումով սահմանված մեկուսացման/ինքնամեկուսացման ռեժիմի խախտման համար անձանց պատասխանատվության ենթարկելը ոչ իրավաչափ է,
- անհրաժեշտ է հստակեցնել վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար ազատության իրավունքի սահմանափակման հիմքերը, ընթացակարգը, երաշխիքները՝ հաշվի առնելով ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված երաշխիքները, այդ թվում՝ իրավունքների մասին իրեն համար հասկանալի լեզվով տեղեկացվելը, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման ապահովում:

<https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22languageisocode%22:%7B%22ENG%22%7D,%22appno%22:%7B%225826/03%22%7D,%22documentcollectionid%22:%7B%22GRANDCHAMBER%22%7D,%22itemid%22:%7B%22001-110986%22%7D%7D>:

⁴⁷ CASE OF BENJAMIN AND WILSON v. THE UNITED KINGDOM, 28212/95, Judgment, 26/09/2002, §§ 33-34, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%7B%2228212/95%22%7D,%22itemid%22:%7B%22001-60649%22%7D%7D>; Khlaifia and Others v. Italy [GC], § 128:

⁴⁸ CASE OF MOLOTCHKO v. UKRAINE, 12275/10, Judgment, 26/04/2012, § 148, հասանելի է <https://hudoc.echr.coe.int/ENG#%7B%22fulltext%22:%7B%22Molotchko%20v.%20Ukraine%22%7D,%22documentcollectionid%22:%7B%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22%7D,%22itemid%22:%7B%22001-110722%22%7D%7D>: